



ԱՌՈՊ

(ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ) ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Հարգելի՛ ծնող, Դուք ավելի լավ եք ճանաչում Ձեր երեխային, քան մեկ ուրիշը, հետևաբար, **Դուք Ձեր երեխայի շահերի լավագույն պաշտպանն եք:**

Ստորև կգտնեք խորհուրդներ, որոնք կօգնեն Ձեզ հաջողությամբ կողմնորոշվել Ձեր երեխայի կրթության գործընթացում, այդ թվում՝ հիմնական տեղեկատվություն ԱՌՈՊ-ի անդամների մասին և ինչ պետք է անել ԱՌՈՊ-ի հանդիպումներից առաջ, դրանց ընթացքում և հետո Ձեր երեխայի կրթությունն առավել արդյունավետ իրականացնելու համար:

1 ԱՌՈՊ

ԱՌՈՊ-ը հատուկ ձևաչափով իրականացվող գրավոր թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի և հետաքրքրությունների հիման վրա և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հենքի վրա: ԱՌՈՊ-ը Ձեր երեխայի կրթության հիմքն է:

Ծնողներից շատերը խուսափում են կամ անհանգստություն ու լարվածություն են զգում ԱՌՈՊ-ի մշակման և քննարկման համար նախատեսված հանդիպումներին մասնակցությունից: Սակայն, **ԱՌՈՊ-ի հանդիպումներին ծնողի մասնակցությունն առանցքային նշանակություն ունի**, քանի որ հնարավորություն է ստեղծվում քննարկել սովորողի ուսուցման անհատական կարիքները և դժվարությունները, միասին գտնել դրանց լուծման ուղիները, ինչպես նաև արձանագրել երեխայի կրթությունից ծնողի ունեցած ակնկալիքները:

2 ԱՌՈՊ-Ի ԹԻՄԸ

Կարևոր է իմանալ, թե ովքեր են ընդգրկված Ձեր երեխայի ԱՌՈՊ-ի մշակման թիմում և որն է նրանց դերը:

- Հիշե՛ք, **Դուք՝ որպես ծնող, ԱՌՈՊ-ի մշակման թիմի կարևոր մասն են կազմում.**
 - ԱՌՈՊ-ի մշակման գործընթացը պետք է լինի համագործակցային: Խոսեք, հայտնեք Ձեր կարծիքը և աշխատեք թիմի հետ միասին: Ձեր ներդրումը կարևոր ու անգնահատելի է:
- **Թիմի մյուս անդամներն են.**
 - դասավանդող ուսուցիչները,
 - մանկավարժահոգեբանական աջակցության թիմը (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, լոգոպեդ),
 - ուսուցչի օգնականը,
 - սովորողը (հնարավորության դեպքում),
 - դպրոցի տնօրենը,
 - դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը:

3 ՀՈՒՇՈՒՄՆԵՐ ԱՌՈՊ-Ի ԹԻՄԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՌՈՊ-ը ճկուն փաստաթուղթ է, որը հենվում է սովորողի կարիքների վրա, այլ ոչ թե խնդիրների կամ դժվարությունների: Սա նշանակում է.

- ԱՌՈՊ-ը միշտ կարող է փոփոխվել: **Միշտ հնարավոր է վերանայել ԱՌՈՊ-ը** և իրականացնել համապատասխան փոփոխություններ ուսումնական տարվա ցանկացած ժամանակահատվածում:
- Կարևոր է ԱՌՈՊ-ի ընթացիկ գնահատումների ընթացքում պարբերաբար պատասխանել հետևյալ հարցին. «**Իրատեսական են արդյոք սահմանված նպատակները, և արդյոք ուսումնական տարվա վերջում հնարավոր կլինի հասնել ԱՌՈՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակին**»:

4 ԱՌՈՊ-Ի ՄՇԱԿՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Ինչպես գիտեք, մի փոքր նախապատրաստությունը շատ կարևոր նշանակություն ունի: Ահա մի քանի խորհուրդներ, որոնք կօգնեն Ձեզ արդյունավետ նախապատրաստվել Ձեր երեխայի ԱՌՈՊ-ի մշակմանը:

- **Վերանայեք նախորդ ԱՌՈՊ-ը** - Ուշադիր ուսումնասիրեք Ձեր երեխայի ընթացիկ ԱՌՈՊ-ը: Գրառումներ կատարեք՝ ընդգծելով կարևոր կետերը:
- **Նպատակներ** - Գնահատեք՝ հասել է արդյոք երեխան այդ նպատակներին: Ծանոթացեք տվյալ տարվա ավարտի դրությամբ սովորողի գրանցած առաջընթացին:
- **Հարմարեցումներ** - Վերանայեք հարմարեցումների ցուցակը որոշելու համար՝ արդյոք որևէ բան պետք է ավելացնել կամ հանել: Անհրաժեշտության դեպքում կարելի է վերաշարադրել, որպեսզի նոր ուսուցիչների, ուսուցչի օգնականների և մասնագետների համար այն դյուրին լինի:





5 ԱՌՈՊ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ինչպես նշեցինք, Դուք՝ որպես ծնող, ԱՌՈՊ-ի համագործակցային թիմի անդամ եք: Ձեր ներգրավվածությունը պետք է սկսվի Ձեր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցությունից և շարունակվի ԱՌՈՊ-ի մշակման և դրա իրականացման բոլոր փուլերում:

Հիշե՛ք՝ Ձեր մասնակցությամբ մշակվող ԱՌՈՊ-ը առավել իրատեսական է, քանի որ այն պլանավորելիս հաշվի են առնվում սովորողի մասին Ձեր տրամադրած շատ կարևոր տեղեկությունները (նրա առողջության, տանը և համայնքում դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների և հմտությունների վերաբերյալ):

- **Հասկացեք Ձեր երեխայի իրավունքները:** Խնդրեք, որ ԱՌՈՊ-ի մշակման սկզբում Ձեզ բացատրվի ԱՌՈՊ-ի մշակման ընթացակարգը: Հարցեր տվեք: Համոզվեք, որ հասկանում եք Ձեր երեխայի իրավունքները:
- **Հարցեր տվեք և պարզաբանում խնդրեք:** Մանկավարժահոգեբանական աջակցության մասնագետները կարող են օգտագործել մասնագիտական ժարգոն և հապավումներ, որոնք Ձեզ ծանոթ չեն: Հարցեր տալը ցույց է տալիս Ձեր վստահությունն ու հետաքրքրվածությունը, ինչպես նաև օգնում է թիմին հասկանալ, որ ակտիվորեն լսում եք նրանց: Օգտագործել պարզաբանող արտահայտություններ, ինչպիսիք են.
 - «Դուք ասո՞ւմ եք _____»:
 - «Կարո՞ղ եք պարզաբանել, թե ինչ նկատի ունեք»:
- **Համոզվեք, որ նոր նպատակները դիտարկելի և չափելի են:** Համոզվեք, որ Ձեր երեխայի նոր նպատակները SMART են (կոնկրետ, չափելի, իրագործելի, իրատեսական, ժամանակային առումով պլանավորված):
- **Փոխզիջող եղեք:** Ձեր և թիմի մյուս անդամների միջև քննարկումների արդյունքում կարող է փոխզիջում իրականացվել ԱՌՈՊ-ի նպատակների կամ ծառայությունների վերաբերյալ: Այդ դեպքում կարևոր է ԱՌՈՊ-ի ընթացիկ գնահատման ժամանակ ուշադրություն դարձնել՝ առաջարկվող պլանն աշխատո՞ւմ է, թե փոփոխման կարիք ունի:
- **Մի ստորագրեք ... դեռ:** Հանդիպման ավարտին, երբ Ձեզ խնդրում են անմիջապես ստորագրել ԱՌՈՊ-ի փաստաթուղթը, կարող եք դա չանել: Փոխարենը կարող եք փաստաթղթի պատճենը տանել տուն՝ մեկ անգամ ևս այն վերանայելու համար:

6 ԱՌՈՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ԱՌՈՊ-ի իրականացման ընթացքում ծնողը ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանն է, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը: Այդ աշխատանքը կարևոր է, որ ամեն ինչ սահուն և արդյունավետ ընթանա Ձեր երեխայի ԱՌՈՊ-ի մշակումից հետո և ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

7 ԱՌՈՊ-Ի ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Երեխայի ԱՌՈՊ-ի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձանց՝ առանց ծնողի գրավոր համաձայնության: Ձեր երեխայի տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց Ձեր գրավոր համաձայնության, հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

8 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով պետք է ասել, որ երեխայի կրթության և զարգացման գործընթացների վերաբերյալ որոշ հիմնական տեղեկատվությանը ծանոթանալը կօգնի Ձեզ դառնալ Ձեր երեխայի ԱՌՈՊ-ի թիմի վստահ անդամ: Ավելին, ԱՌՈՊ-ի այս փորձված և իրական խորհուրդներից մի քանիսը կիրառելը կարող է ապահովել, որ Ձեր երեխան առավելագույն օգուտ քաղի իր կրթությունից:

Մենք նախապես շնորհակալություն ենք հայտնում Ձեր աջակցության և համագործակցային աշխատանքի համար:

